

1.4. Աշխատանքի շուկայի ցուցանիշներ

1.4.1.Ձրադվածություն

Տնտեսապես ակտիվ բնակչության միջին թվաքանակը 2003թ. հունվար-ապրիլին հանրապետությունում, ըստ գնահատման, կազմել է 1403.9 հազ. մարդ, որի 90.9%-ը կամ 1276.4 հազ. մարդ զբաղված են եղել տնտեսության մեջ, իսկ 9.1%-ը կամ 127.5 հազ. մարդ (միջինը ժամանակաշրջանի համար) չեն ունեցել աշխատանք, գրանցվել են ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալությունում և ստացել գործազուրկի կարգավիճակ:

2003թ. ապրիլի վերջի դրությամբ ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալությունում հաշվառման կանգնած 156.1 հազ. աշխատանք փնտրողներից 99.2%-ը կամ 154.8 հազարը եղել են չզբաղվածներ: Գործազուրկի կարգավիճակ ստացել են չզբաղվածների 82.5%-ը կամ 127.7 հազ. մարդ:

2003թ. ապրիլին վերոհիշյալ գործակալության կողմից հաշվառման վերցված 2.7 հազ. չզբաղվածներից 2.0 հազարը կամ 74.1%-ը ստացել են գործազուրկի կարգավիճակ: Նույն ժամանակամիջոցում հաշվառումից հանվել են 2.5 հազ. մարդ, նրանցից 22.7%-ը՝ աշխատանքի տեղավորման պատճառով:

Աշխատուժի առաջարկն ըստ հանրապետության մարզերի 2003թ. ապրիլին¹

	Աշխատանք փնտրող քաղաքացիների թվաքանակը		Նրանցից գործազուրկներ	
	ընդամենը, հազ. մարդ	նախորդ տարվա ապրիլի նկատմամբ, %	ընդամենը, հազ. մարդ	նախորդ տարվա ապրիլի նկատմամբ, %
ք.Երևան	37.0	89.4	33.3	87.6
Արագածոտն	2.3	100.0	1.5	100.0
Արարատ	6.3	86.3	4.9	81.7
Արմավիր	8.5	95.5	5.8	89.2
Գեղարքունիք	9.0	102.3	6.5	100.0
Լոռի	26.8	108.5	22.0	104.8
Կոտայք	9.2	90.2	6.8	86.1
Շիրակ	32.6	96.7	27.4	94.2
Սյունիք	17.0	103.0	14.1	102.2
Վայոց ձոր	2.2	104.8	1.7	100.0
Տավուշ	5.2	113.0	3.7	92.5
Ընդամենը ՀՀ	156.1	97.3	127.7	93.9

Կանայք կազմել են պաշտոնապես գրանցված գործազուրկների 67.4%-ը: Նրանց տեսակարար կշիռը գործազուրկների ընդհանուր թվաքանակում 2002թ. ապրիլի նկատմամբ աճել է 1.3%-ով: Աշխատուժի պաշտոնապես հայտարարված պահանջարկը 2003թ. ապրիլի վերջին կազմել է 1057 մարդ, այդ թվում՝ 83.2%-ը կամ 879-ը՝ բանվորական մասնագիտությունների նկատմամբ:

2003թ. ապրիլին ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության միջնորդությամբ աշխատանքի տեղավորվել են 573 մարդ, որոնց 49.4%-ը՝ կանայք: Մեկ թափուր աշխատատեղի ծանրաբեռնվածությունը կազմել է 146 չզբաղված մարդ:

Հանրապետությունում նպաստառու գործազուրկների թվաքանակը 2003թ. ապրիլին կազմել է 7.4 հազ. մարդ, իսկ գործազրկության նպաստի միջին չափը՝ 3075 դրամ: Նույն

¹ ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալությունից տվյալներով:

ամսում դրամական օգնություն ստացել են 12.8 հազ. գործազուրկ: Դրամական օգնության միջին չափը կազմել է 1412 դրամ:

Գործազրկության մակարդակը, հաշվարկած որպես զբաղվածության տարածքային կենտրոններում պաշտոնապես գրանցված գործազուրկների և տնտեսապես ակտիվ բնակչության (զբաղվածներ և գործազուրկներ) հարաբերակցություն, 2003թ. ապրիլին կազմել է 9.1% և 2002թ. ապրիլի համեմատությամբ նվազել է 0.5 տոկոսային կետով, իսկ 2003թ. մարտի նկատմամբ մնացել է նույն մակարդակին: